«Նոր ժամանակի կրթություն»
ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Գրաճանաչության ուսուցման առանձնահատկություններ

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Անահիտ Կարապետյան

Ուսումնական հաստատություն՝ Արագյուղի << Տիգրանակերտ կրթարան>> միջնակարգ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն----------2

Գրաճանաչության ուսուցման նախապատրաստական շրջան-------7

Գրաճանաչության ուսուցման այբբենական շրջան----------9

Հնչյունի և տառի ուսուցում----------11

Գրելու ուսուցում ----------12

Գրաճանաչության ուսուցման հետայբբենական շրջան----------13

Եզրակացություն ---------- 18

Գրականության ցանկ ---------- 19

Գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կյանքի, գիտության, տեխնիկայի մշակույթի հարաճուն զարգացմանը զուգընթաց դպրոցն էլ անընդհատ զարգանում ու կատարելագործվում է՝ հնարավորին չափ համահնչյուն դառնալով կյանքի հետ։

Դպրոցի առջև դրված նոր խնդիրները գրեթե անհնարին է ճիշտ իրագործել ուսուցման հին ձևերով ու մեթոդներով, քանի որ դրանք ուսուցման այլ խնդիրների ու պահանջների արդյունք են եղել և նույնությամբ չի կարելի գործադրել նոր պայմաններում։

Տարրական դասարանների մայրենի լեզվի ժամանակակից մեթոդիկայի համար աղբյուրներ են եղել նաև անցյալի հայ դպրոցի փորձն ու հայոց լեզվի մասնավոր մեթոդիկայի ավելի քան մեկդարյա պատմությունը։ Տարրական դասարաններում հայոց լեզվի ուսուցման հարցերին նվիրված ուսումնասիրության համար հարուստ աղբյուրներ են եղել անցյալի և ժամանակակից դպրոցի հայոց լեզվի և այլ լեզուների

մայրենի լեզվի դասագրքերը։

Հայոց լեզվի մեթոդիկան ունի իր հիմնական բաժինները, ուր առանձին-առանձին քննարկվում են գրաճանաչության, ընթերցանության, քերականության ուսուցման, խոսքի զարգացման և մեթոդական աշխատանքների կազմակերպման հարցերը։

Լեզվի ուսուցման մեջ տարբերակվում են միմյանց հետ սերտորեն կապված երեք հիմնական կողմերը՝

ա) ուսումնական առարկան կամ ուսուցման բովանդակությունը

բ) ուսուցչի գործունեությունը, այսինքն՝ դասավանդման կամ ուսուցման գործողությունը

գ) աշակերտների գործունեությունը, այսինքն՝ ուսումնառության կամ հաղորդված գիտելիքների յուրացման պրոցեսը։

Մայրենի լեզվի մեթոդիկան մանկավարժական գիտությունների շարքում ամենահներից մեկն է։ Հայոց լեզվի մեթոդիկան ևս բացառություն չի կազմում։ Այն սկիզբ է առել մեր մշակույթի պատմության դեռևս մեսրոպյան շրջանից։ Այդ գործում բացառիկ մեծ ծառայություններ ունի հայ մեծ լուսավորիչ – մանկավարժ Խաչատուր Աբովյանը, որը հայ մանկավարժության ու դպրոցի պատմության մեջ նոր ժամանակաշրջանի սկզբնավորողը դարձավ։

Դպրոց ընդունվելը բեկումնային պահ է երեխայի կյանքում, անցում նոր սոցիալական պայմանների ու գործունեության ձևերի, հետևաբար պահանջում է դպրոցական ուսուցմանը երեխաների նախապատրաստման անհրաժեշտություն։

Դպրոցը երեխայի համար նոր աշխարհ է՝ նոր հետաքրքրություններով, հոգսերով ու տպավորություններով, ուրախություններով ու անակնկալներով լի։ Ուսուցիչն իր աշխատանքը այնպես պետք է կազմակերպի, որ աշակերտների համար ավելի շատ լինեն հաճելի պահեր՝ որ աշակերտը դպրոցում իրեն լավ զգա, սիրի դպրոցը, հաճույքով հաճախի դպրոց։ Նրա դպրոցական առօրյան պետք է լինի ուրախ, թեթև, հաճելի։

Կրտսեր դպրոցականներին գրաճանաչ դարձնելու և կարդալու տարրական կարողության ձևավորման գործընթացում մշտապես կարևորվել են այբուբենի գրաֆիկական առանձնահատկությունները։

Գրաճանաչության մեթոդիկայի հիմքը եղել է տառը։ Այդ է պատճառը, որ պատմության ընթացքում գերակշռել են գրաճանաչ դարձնելու տառային մեթոդները։

Տառերով կարդալու պատմական մեթոդից գրաճանարության մեթոդիկան հետագայում որդեգրեց տառանունների գործածման սկզբունքը, տառի ճանաչումից հետո նրա արտասանության մեջ։

Գրաճանաչության գործընթացի կազմակերպման ընթացքում հնչյուն- տառերի ուսուցման հաջորդականությունը միայն հնչույթաբանությամբ չի պայմանավորված

և գրաճանաչության մեթոդիկայի հիմքում միայն հնչույթաբանությունը չի դրված։

Գրաճանաչության դասի գլխավոր նպատակը երեխային կարդալ սովորեցնելն է, որի համար անհրաժեշտ է տեսողական զգայարանն աշխատեցնել լսողական զգայարանների հետ համատեղ։

Պատահական չէ, որ գրաճանաչության մեթոդիկայի համաձայն կարդալն ու գրելը միասին են ուսուցանել։ Կարդալը նպաստում է գրելու կարողության ձևավորմանը, իսկ գրելը՝ կարդալու։

Ինչպես գիտենք, կրթության բոլոր օղակների միջև գոյություն ունի սերտ և տրամաբանական կապ, որն ապահովում է սահուն անցումը կրթության մի օղակից մյուսին և կրթական նպատակների ու խնդիրների արդյունավետ լուծումը։

Երեխայի դպրոցական ուսուցման նախապատրաստման նպատակը զարգացման բարենպաստ միջավայրի ապահովումն է, որտեղ ըստ ամենայնի կբացահայտվեն և կդրսևորվեն նրա ներքին հնարավորություններն ու կարողությունները, կզարգանան երեխայի հոգեկան, սոցիալական, ֆիզիկական կարողությունները։

Յուրաքանչյուր ժողովրդի մշակույթի ու դպրոցի պատմությունն սկիզբ է առնում ազգային գրերի ստեղծումից և դրանց ուսուցումից։ Այս առումով մանկավարժական գիտություններից ամենահինը մայրենի լեզվի մեթոդիկան է, իսկ նրանում էլ ամենահինը՝ գրաճանաչության բաժինը։

Գրաճանաչության մեթոդիկան զբաղվում է գրաճանաչության ուսուցման հարցերով՝ գրուսուցման ժամանակակից մեթոդի, 6-7 տարեկան երեխաների տարիքային առանձնահատկությունների, այբբենարանի կառուցվածքի ու բովանդակության, ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման, երեխաների համակողմանի դաստիարակության խնդիրների ընդգրկումով։

Մարդկային հասարակությունն իր ժամանակակից մշակույթով, գիտության ու տեխնիկայի բարձր մակարդակով ամենից շատ պարտակա է գրին, որովհետև քաղաքակրթության զարգացումը սերտորեն կապված է եղել գրի ծագման հետ։

Գրի գյուտը համարվում է բազմադարյան պատմության ընթացքում կատարված ամենամեծ հայտնագործություններից մեկը։

Գիրը խոսքի գրառման միջոց է։ Գիրն իր էությամբ սերտորեն կապված է բանավոր խոսքի հետ, նրա գրանցումն է պայմանական նշաններով և առանց բանավոր խոսքի չի կարող լինել գիր ու գրականություն։ Գրի շնորհիվ է, սերունդների համար պահպանվել են վաղուց անհետացած բազմաթիվ ժողովուրդների հոգևոր գանձերն ու պատմությունը։

Հայ դպրոցն ու մանկավարժությունը գրաճանաչության ուսուցման բազմադարյան ու հարուստ պատմություն ունեն: Հետաքրքրական է պարզել, թե ինչ մեթոդներ են գործադրվել հայ դպրոցում և ինչ արդյունքներ են տվել, ինչ հետք են թողել այդ

մեթոդները գրաճանաչության ուսուցման ժամանակակից մեթոդիկայում:

Դարերի ընթացքում գրաճանաչության ուսուցման բազմաթիվ ու բազմապիսի մեթոդներ են ստեղծվել, որոնք շատ կողմերով տարբերվել են միմյանցից:

Ըստ գերմանացի մանկավարժ Քեռի գրաճանաչության ուսուցման մեթոդներից ամենահինը համադրական խմբի մեթոդներն են, որոնք ուսուցման ընթացքում երեխաներին տանում են մասերից ամբողջը, այսինքն՝ տառերից կամ հնչյուններից դեպի վանկը, բառը և նախադասությունը: Այդ մեթոդներով պարապելիս աշակերտներին նախ գաղափար է տրվում տառի, հնչյունի կամ վանկի մասին, ապա դրանցից կազմվում է բառեր ու նախադասություններ: Ըստ այս մեթոդների՝ կարդալ նշանակում է բառի մեջ եղած տառերին համապատասխանող հնչյունները միացնել իրար հետ, բառ կազմել և արտասանել:

Վերլուծական խմբի մեթոդների հիմնական առանձնահատկությունն այն էր, որ դրանք ուսուցումը սկսում էին ամբողջական խոսքից, նախադասությունից կամ բառից և այդ ամբողջությունը կազմող մասերի՝ բառի, վանկի, հնչյունի կամ տառի ըմբռնումով:

Վերլուծական- համադրական խմբի մեթոդներն ուսուցումը տանում էին ամբողջից դեպի նրա մասերը և մասերից նորից դեպի ամբողջը, այսինքն՝ խոսքից, նախադասությունից կամ բառից դեպի վանկը, հնչյունը կամ տառը գնացող վերլուծությամբ և հնչյունների, տառերի կամ վանկերի համադրումից դեպի բառեր, նախադասություններ և ամբողջական խոսք ստանալու ընթացքով:

Գրաճանաչության ուսուցման վերլուծական- համադրական հնչույթաբառային մեթոդը դրական արդյունքներ տվեց և լիովին համապատասխանում է հայոց լեզվի լեզվական առանձնահատկություններին և հնարավորություն է տալիս երեխաների մեջ մշակել նրանց հետագա առաջընթացի համար կարևոր նշանակություն ունեցող կարդալու, գրելու, մտածելու և խոսելու գործնական կարողություններ:

Տարրական դասարանների դասընթացի մեթոդիկայի բաժիններից մեկը գրաճանաչության մեթոդիկան է, որտեղ քննարկվում են գրաճանաչության ուսուցման մեթոդների, դրանց նպատակահարմար և արդյունավետ գործադրման հարցերը,

երեխաներին գրաճանաչությանը նախապատրաստելու, լեզվի հնչյունների ու դրանց համապատասխանող տառերի ճիշտ դասդասման ու խմբավորման խնդիրների ու նպատակների, կարդալու ու գրելու մեխանիզմների ճիշտ ձևավորման, դրանց տեղի ու դերի որոշման հետ կապված: Գրաճանաչության մեթոդիկան զբաղվում է գրաճանաչության ուսուցման հարցերով:

Լեզուն որպես հաղորդակցման հիմնական միջոց, դրսևորվում է երկու ձևով՝ հնչյունային և գրային կամ բանավոր և գրավոր խոսքի միջոցով:

Հայ դպրոցն ու մանկավարժությունը գրաճանաչության ուսուցման բազմադարյան հարուստ պատմություն ունեն: Դարերի ընթացքում գրաճանաչության ուսուցման բազմաթիվ ու բազմապիսի մեթոդներ են ստեղծվել:

ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Գրաճանաչության ուսուցումը ունի երկու շրջան՝ նախապատրաստական և բուն գրուսուցման: ՝Նախապտրաստական շրջանում երեխաների խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում գլխավորը նրանց բառապաշարի հարստացման ու հղկման, ինչպես նաև կապակցված խոսք կառուցելու ունակության

մշակումն ու զարգացումն է: Այս շրջանում հատուկ աշխատանք է տարվում նկարի, տեսածի, լսածի մասին կապակցված ամբողջական ձևով պատմելու, խոսքից կամ պատմությունից նախադասությունն առանձնացնելու, նախադասությունը բառերի վերլուծելու, բառը վանկերի բաժանելու, վանկերը հնչյունների վերածելու և հնչյունն առանձնացնելու կարողությունները մշակելու ուղղությամբ:

Գրաճանաչության ուսուցման նախապտրաստական շրջանը սովորաբար կազմակերպվում է երեք շրջանով.

ա) նախաայբբենական

բ) այբբենական կամ գրուսուցման շրջան

գ) հետայբբենական շրջան

Գրաճանաչության ուսուցման նախայբբենական շրջանում աշակերտները գործնական ճանապարհով ձեռք են բերում որոշ պարզ լեզվական գիտելիքներ: Երեխաներն այս շրջանում սովորում են պատմություն հորինել նախադասություն կազմել, վերլուծել,որ նախադասությունը կազմված է բառերից, կարողանում են բառը բաժանել վանկերի, վանկերը՝ հնչյունների: Կարողանում են որոշել հնչյունի տեսակը, բառի վանկատման ժամանակ, որոշում են ը գաղտնավանկի տեղը և կարողանում են բառը տողադարձել:

Գրաճանաչության նախայբբենական շրջանի վերջում երեխան պետք է՝

ա) Գաղափար ունենա պատմության, նախադասության, բառի, վանկի, հնչյունի (ձայնավոր, բաղաձայն) մասին

բ) Տարբերակի ձայնավոր և բաղաձայն հնչյունները

գ) Որոշի հնչյունի տեղը բառի մեջ

դ) Գիտակցի ձայնավորի դերը

ե) Կարողանա թեմատիկ նկարի շուրջ կազմի մտքով իրար հետ կապված մի քանի նախադասություն՝ պատմություն / կապակցված խոսք /

զ) Կարողանա իր մտքերն ազատ ու համարձակ արտահայտել

է) Կարողանա գրել հայերենի տառերի պարզ մասնիկները

Գրաճանաչության ուսուցման նախայբբենական շրջանը ոչ միայն անհրաժեշտ,

այլև խիստ կարևոր է, որովհետև հետագա աշխատանքի ամբողջ հաջողությունը մեծ չափով կախված է նաև աշակերտների դպրոցի համար լավ նախապատրաստված լինելուց:

Այս շրջանի համար բնորոշ են հիմնական հետևյալ խնդիրները՝

ա) աշակերտների ծանոթացումը դպրոցական կարգուկանոնին, երեխաների խոսքի զարգացմանը,

բ) տեսողության, լսողության և ուշադրության մշակումը ,

գ) գրելու համար ձեռքի նախապատրաստումը,

դ) կարդալու սկզբնական կարողության ձևավորման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը,

ե) աշակերտների ուսումնասիրումը և այլն։

Երեխաները մինչև դպրոց գալը վարժված են միայն բառեր, նախադասություններ և

կապակցված խոսք լսելու և ընկալելու։ Նա խոսում է հնչյուններով, բայց հնչյունների մասին գաղափար չունի, դրանք խոսքի մեջ չի տարբերում, ուստի պետք է սովորեցնել բառի մեջ լսել, տարբերակել և ճանաչել գործածական հնչույթները։

Գրաճանաչության ուսուցման ընթացքում գրեթե ամեն օր ու ամեն դասի խոսք է

լինում նախադասության, բառի, վանկի, միավանկ ու բազմավանկ բառերի, հնչյունի,

ձայնավոր ու բաղաձայն հնչյունների, տառի, մեծատառի ու փոքրատառի, տպագիր ու ձեռագիր տառերի մասին, որոնք պետք է երեխաների համար հասկանալի լինեն։

<<Այբբենարան>>-ում տրված թեմատիկ, առարկայական և բառ-նկարների

օգնությամբ գաղափար ենք տալիս խոսքի կամ ամբողջական պատմության,

նախադասության ու բառերի մասին, կատարում ենք վարժություններ

նախադասությունները բառերի բաժանելու, առաջադրված բառերով

նախադասություններ կազմելու, ինքնուրույն նախադասություններ ու բառեր ասելու։

Այս աշխատանքներից ամեն մեկը յուրովի վերցրած տարբեր տիպի

պարապմունքների մի ամբողջ համակարգ է կազմում, սակայն առանձին ու անկախ հանդես չի գալիս, որովհետև դրանք միմյանց մեջ ներթափանցված, փոխադարձորեն միմյանց լրացնող ու ամբողջացնող աշխատանքներ են։

Նախապատրաստական շրջանում միայն պայմաններ են ստեղծվում

գրաճանաչության համար, իսկ բուն ուսուցումը կատարվում է այս շրջանում։

ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Գրաճանաչության ուսուցման աշխատանքներում ամենահիմնական տեղը գրավում է բուն գրուսուցման կամ այբբենական շրջանը։

Այբբենական շրջանում երեխան ճանաչում է բոլոր հնչյուններն ու դրանց տառերը, սովորում է դրանք ճիշտ արտաբերել, գրել ու կարդալ կամ հնչյունները վերածել գրերի՝ գրել, գրերը վերածել հնչյունների՝ կարդալ։

Երբ երեխաները նոր են սկսում սովորել հնչյուններն ու դրանց տառերը,

հիմնականում հնչյունների ուսուցում է կատարվում, իսկ հետագայում դրան միանում է նաև բառեր կարդալու ուսուցումը, ավելի ուշ՝ բառակապակցությունների, նախադասությունների ու կապակցված բնագրերի ընթերցումը, ուղղագրական ու ուղղախոսական պարզ կանոնների յուրացումը, լեզվական գիտելիքների հաղորդումը։

Գրաճանաչության այբբենական շրջանը բաժանվում է երեք փուլերի։

Առաջին փուլում ուսուցանվում են գրության ու արտասանության տեսակետից

ամենահեշտ ու ամենագործածական հնչյուններն ու դրանց տառերը (ա, ի, ու, տ, կ, ս, ր, ն, մ, շ, լ, պ)։ Դրան զուգընթաց այս փուլում երեխաներն էլ ավելի են վա

բառերի վանկային ու հնչյունային վերլուծություններ ու համադրություններ կատարելու մեջ, սովորում են բառեր կարդալ՝ կարդալու հիմքում ունենալով վանկերով կամ բառերով կարդալու սկզբունքը։ Այս փուլում երեխաները սովորում են կապակցված ձևով վերարտադրել <<Այբբենարան>>-ում տրված թեմատիկ նկարների բովանդակությունը, խոսքը բաժանել բաղադրիչների։ Սովորում են շարժական տառերով բառեր կազմել ու դրանք վանկերի բաժանել, կազմել դրանց գծային մոդելները։ Այս փուլի վերջում աշխատանք է տարվում բառակապակցությունների ու 2-4 բառերից կազմված նախադասությունների, 2-3 նախադասություններից կազմված պարզ բնագրերի ընթերցման շուրջ։

Առաջին փուլում երեխաներին սովորեցնում ենք նաև գրել անցած տառերն ու այդ տառերը պարունակող բառեր ու բառակապակցություններ։ Տետրերում գրում են ըստ տրված օրինակի, գրում են նաև գրատախտակին, որպեսզի աստիճանաբար

վարժվեն տառապատկերներն ու բառապատկերները մտապահելուն։

Երկրորդ փուլում անցնում ենք համեմատաբար ավելի դժվար արտասանություն ու գրություն ունեցող և ավելի քիչ գործածական հնչյուններն ու տառերը (ը, է, (ե), օ, (ո), վ հ, յ, զ, ռ, ղ, ժ, խ, բ, գ, դ)։

Գրելու աշխատանքներին զուգընթաց սովորում են նաև վայելչագրական և

ուղղագրական մի շարք կանոններ՝ բառերը գրել միմյանցից ա տառի չափ

հեռավորությամբ, նոր գրելիս սկսել մի քիչ խորքից, մարդկանց անունները սկսել

մեծատառով և այլն։

Երրորդ փուլում անցնում ենք արտասանության ու գրության տեսակետից բարդ և խոսքի մեջ համեմատաբար ավելի քիչ գործածական հնչյուններն ու տառերը (ե,

ռ, և, թ,, չ, ծ, ց, փ, ջ, ք, ճ, ֆ, ձ): Այս փուլի ամենամեծ դժվարությունը երկհնչյուն և եռահնչյուն (ե, ռ, և) տառերի երևան գալն է:

Գրելու աշխատանքին զուգընթաց երեխաները սովորում են ուսուցչի թելադրությամբ գրել օժանդակ բայերն ու շաղկապները:

ՀՆՉՅՈՒՆԻ և ՏԱՌԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Գրաճանաչության շրջանում ամենահիմնական խնդիրը բառի հնչյունային վերլուծությունը և յուրաքանչյուր հնչյուն իր համապատասխան տառի հետ կապելն է, հնչյունները հիշելն ու արտաբերելը, վանկի մեջ դրանք միավորելն ու արտաբերելը: Հնչյունի ու նրա տառերի լրիվ յուրացման համար կարևոր նշանակություն ունի դրանց հաճախակի կրկնությունը հետագա նյութերում, որպեսզի կայունանա սովորած հնչյունի ու նրա տառերի յուրացումը:

Գրաճանաչության ուսուման ամենադժվար և միաժամանակ ամենակարևոր աշխատանքը նոր սովորելիք հնչյունի անջատումն է բառից:

Հնչյունի ուսուցումն ավարտելուց հետո պետք է անցնել նրա տառերի ուսուցմանը: Երեխաների մեջ հնչյունի ու նրա տառերի միջև ամուր կապեր ստեղծելու նպատակով ուսուցված հնչյունի ու նրա տառերի ամրապնդման դասերին կարելի է կազմակերպել վարժություններ.

ա) Ասել հնչյունը և պահանջել, որ երեխաները ցույց տան համապատասխան տառը

բ) Ասել բառեր, պահանջել, որ ցույց տան բառի առաջին հնչյունին համապատասխանող տառը

գ) Ասել հնչյուններ և պահանջել, որ աշակերտները թվեն այդ հնչյուններով սկսվող

բառեր

դ) Թվել այդ հնչյուններով սկսվող բառեր կամ բառեր, որոնցում հնչյունը լինի

բառամիջում կամ բառավերջում

ե) Ցույց տալ առարկան, երեխաները շարժական տառերով կազմեն բառը

Կարդալու կարողությունը երեխաների մեջ սկսում է ձևավորվել

նախապատրաստական շրջանում, երբ նկարների ու գծային մոդելների օգնությամբ միավանկ ու բազմավանկ բառերը վանկերով ու ամբողջական բառերով կարդալու վարժություններ են կատարում։

Նախադասությունը կարդալ սովորեցնելու կարևոր կողմերից մեկը օժանդակ բայի ճիշտ ընթերցումն է, ինչը կարևոր նշանակություն ունի նախադասության միտքը հասկանալու համար։ Նախադասությունը կարդալիս երեխան պետք է ճիշտ հասկացնի ստորակետը և վերջակետը։

ԳՐԵԼՈՒ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Գրաճանաչության ուսուման ընթացքում գործադրվող դասերի գրեթե կեսը հատկացվում է գրելու աշխատանքին։ Գրելու ուսուցման աշխատանքները սկսվում են դեռևս նախապատրաստական շրջանից, երբ երեխայի ձեռքը նախապատրաստում ենք գրելուն, սովորեցնում ենք գրիչը բռնել, ճիշտ նստել, պահպանել տետրի թեքությունը, գունավորել պատկերներ։ Գրելու ընթացքում որոշակի տարբերություններ կան տառի ու բառի, բառի ու բառակապակցության, բառակապակցության ու նախադասության գրելու աշխատանքների միջև, որովհետև դրանք աշակերտից տարբեր աշխատանքներ, տարբեր գիտելիքներ ու կարողություններ են պահանջում։

Գրելը որպես մտավոր գործողություն ավելի բարդ աշխատանք է, քան կարդալը։ Այս աշխատանքներում շատ կարևոր է գրելու նախապատրաստումը, որի համար անհրաժեշտ են.

- Ձեռքի դաստակի մարզում
- Տեսողական հիշողության զարգացում
- Գրելու ժամանակ կանոնների պահպանում
- Հայերենի հիմնական տառամասնիկները գրելու կարողության մշակում
- Մշակել ձեռքի՝ ձախից աջ գնացող շարժումներով գրելու ունակություն
- Սովորեցնել գրիչը կամ մատիտը բռնել
- Նստել ճիշտ կեցվածքով

Երեխային գրել սովորեցնելու համար հենց սկզբից նրա մեջ պետք է ձևավորել երեք կարգի կարողություններ՝ տեխնիկական, գրաֆիկական և ուղղագրական։

Գրելու ուսուցումը սկսվում է ամբողջական տառի գրությունից։ Տառը գրելուց առաջ աշակերտներին ցույց է տրվում, թե տառը ինչ մասնիկներից է կազմված և

ինչ հաջորդականությամբ պետք է համադրել այդ մասնիկները, որպեսզի տառը ստացվի։ Գրելու գործողության ժամանակ վերցվում է ամբողջական տառը։ Պետք է հենց

սկզբից սովորեցնել կապակցվող տառերը հաջորդ տառերի հետ կապակցելու ձևերը։

Բառի գրության ուսուցումը համեմատաբար ավելի դժվար է, քանի որ

նոր տառը մյուս տառերի հետ համաչափության մեջ դնելու հարց կա։ Բառը

գրելուց առաջ երեխան պետք է ընկալի ու հասկանա բառի կազմությունը, նրա

բառիմաստը, հնչյունային ու տառային կազմը, որպեսզի այն ճիշտ գրի։ Նախադասության գրության ժամանակ պետք է պահպանվեն

- բառամիջյան տարածությունները,
- գրի համաչափությունն ու թեքությունը,
- նախադասությունը մեծատառով սկսելը,
- նախադասության վերջում վերջակետ դնելը,
- նոր տողի պահպանումը և այլն։

Հնչյուններն ու տառերն անցնելուն զուգընթաց երեխաները գիտելիքներ են ստանում

- մեծատառի ու փոքրատառի,
- տպագիր ու ձեռագիր տառերի,
- մարդկանց անունները մեծատառով գրելու մասին,

* ուղղագրական կանոնների,

- գաղտնավանկի ու տողադարձի մասին։

ԳՐԱՃԱՆԱՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԵՏԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Գրաճանաչության ուսուցումն ավարտվում է հետայբբենական շրջանով, որն

ընդգրկում է գրաճանաչության ուսուցումից մինչև մայրենի լեզվի ընթերցարանին

անցնելու կարճատև շրջանը։ Հետայբբենական շրջանում տարվող աշխատանքների

հիմնական նպատակն է ա) Ամրապնդել ու կատարելագործել գրաճանաչության ուսուցման ընթացքում ձեռք

բերված կարդալու և գրելու կարողությունները

բ) Ամփոփել նախորդ շրջանում ձեռք բերված լեզվական, ուղղագրական,

կետադրական գիտելիքները

գ) Երեխաներին նախապատրաստել բացատրական ընթերցանությանն անցնելուն

Գրաճանաչության ուսուցման հետայբբենական շրջանում հիմնական աշխատանք պետք է տանել լավ կարդալու ուղղությամբ, որ կարդալը դառնա գիտակցված, ճիշտ, սահուն ու արտահայտիչ։ Աշակերտը պետք է կարողանա լավ կարդալ, բառերը բացատրել ու խոսքի մեջ օգտագործել, կապակցված վերարտադրել բովանդակությունը։ Նման պահանջները մեծացնում են երեխաների պատասխանատվությունը կատարվելիք աշխատանքի նկատմամբ։

Գրաճանաչության ուսուցման հետայբբենական շրջանում մեծ ուշադրություն պետք է դարձնել .

- Կարդալու տեխնիկայի կատարելագործմանը
- Սովորեցնել տարբեր բնույթի նյութեր կարդալ
- Ոտանավորներ անգիր անել
- Կարդալու գործողությունը մանրամասն վերլուծել
- Մշակել ու կատարելագործել գրելու կարողությունը
- Կապակցված գրությունը զարգացնել
- Ճիշտ և մաքուր արտասանել բառի կազմի մեջ մտնող բոլոր հնչյունները
- Կարդալիս չավելացնել և բաց չթողնել տառեր, վանկեր, բառեր
- Պահպանել հայերենի ուղղախոսության կանոնները
- Կարդալ այնպիսի տեմպով, ինչպես խոսում են
- Թույլ չտալ անհարկի դադարներ
- Կարդալ ամբողջական բառերով
- Հասկանալ կարդացածի բովանդակությունը

Գրաճանաչության ուսուցման հետայբբենական շրջանում պիտի կարևորել գրելը, որը նպաստում է կարդալու կարողության զարգացմանը։ Գրելը որպես մտավոր գործողություն շատ ավելի բարդ աշխատանք է քան կարդալը։ Որպեսզի աշակերտը կարողանա ճիշտ գրել, ինչպես Գ. Էդիլյանն էր ասում, նախ պետք է << պարզել բառի հնչյունային կազմը և հետո միայն այն գրել>>։

Վարժ գրողի նամար գրելու գործողությունը բավականին հեշտ է, քանի որ նա իր ուշադրությունը կենտրոնացնում է միայն գրածի մտքի վրա։ Այլ ձևով է ընթանում նոր գրել սովորողի գործունեությունը։ Աշխատանքի նոր ու անսովոր լինելու պատճառով երեխան ստիպված է լինում ուշադրությունը հիմնականում կենտրոնացնել գրելու համար անհրաժեշտ տեխնիկական պայմանների ու գրի

գրաֆիկական կողմի պահպանման վրա։ Երեխային գրել սովորեցնելու համար հենց սկզբից նրա մեջ պետք է ձևավորել երեք կարգի կարողություններ՝ տեխնիկական,գրաֆիկական և ուղղագրական։

Գրելու ուսուցումը սկսվում է տառային աստիճանից կամ ամբողջական տառի գրությունից։ Տառը գրելուց առաջ աշակերտներին ցույց է տրվում, թե տառը ինչ մասնիկներից է ձևավորվում և ինչ հաջորդականությամբ, սակայն գրելու գործողության ժամանակ վերցվում է ամբողջական տառը։

Բառի ամբողջական գրությունը համեմատաբար ավելի դժվար է։ Բառը գրելուց առաջ երեխան պետք է ընկալի ու հասկանա ինչպես նրա բառիմաստը, այնպես էլ հնչյունային ու տառային կազմը, որպեսզի այն ճիշտ գրի։

Հայտնի է, որ գրաճանաչության այբբենական շրջանում աշակերտները գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերի գրեթե չեն հանդիպում, իսկ հետայբբենական շրջանում ընթերցանության նյութերում հանդիպում են նաև այսպիսի բառեր, որոնց ընթերցումը նորություն է երեխաների համար։ Դրանք ճիշտ կարդալ սովորեցնելու հիմքում պետք է դնել ոչ թե ուղղագրական կանոնի, այլ ուղղախոսական նորմաների գիտակցումը։ Այս նշանակում է, ուսուցման ժամանակ պետք է առաջ քաշել ոչ թե գրության ու արտասանության տարբերությունն ու հակադրությունը, այլ կարդալու և խոսելու նույնությունը։

Այս շրջանում գլխավոր նպատակը ոչ թե կարդալու արագությունը, այլ ճշտությունը պետք է լինի։

Հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնել կարդալու տեխնիկայի կատարելագործմանը, սովորեցնել տարբեր բնույթի նյութեր կարդալ, ոտանավորներ անգիր անել, կարդացածի բովանդակությունը ինքնուրույն վերարտադրել։

Հետայբբենական շրջանի համար բնորոշ աշխատանքներից մեկն էլ գրաճանաչության շրջանում սովորած լեզվական, ուղղագրական, կետադրական գիտելիքների ամփոփումն ու համակարգումն է։

Գրաճանաչության շրջանում սովորած լեզվական գիտելիքների վերհիշման, ամփոփման ու համակարգման համար հնարավորություն կարող է ստեղծել ընթերցանության համար ընտրված յուրաքանչյուր նյութ։

Ընթերցած բնագրի պարզ վերլուծությունների շնորհիվ կարելի է կրկնել լեզվական, ուղղագրական ու կետադրական գիտելիքները՝ պահպանելով պարզից դեպի բարդ տանող սկզբունքը։

Որոշակի հաջորդականություն պետք է ստեղծել նաև ուղղագրական գիտելիքների միջև՝ հիմնական շեշտը դնելով մեծատառով սկսվող բառերի գրության վրա։

Երեխաներին պետք է նախապատրաստել նաև բացատրական ընթերցանությանը, որովհետև նրանք ոչ միայն պետք է կարողանան կարդալ առաջադրված բառը, այլև հասկանան , բացատրեն վերարտադրեն նրա իմաստը։ Բացատրական ընթերցանության մեթոդի գործադրումը դպրոցում սկսվում է դեռևս առաջին բառերի ընթերցումով և աստիճանաբար զարգանում է կարդալու տեխնիկայի կատարելագործման հետ։ Սակայն բացատրական ընթերցանության մեթոդը գործադրվում է միայն հետայբբենական շրջանից սկսած, երբ դասի հիմնական նպատակը դառնում է ընթերցվող նյութի բազմակողմանի ու խորը յուրացումը։

Հետայբբենական շրջանից սկսած, ընթերցանության գրեթե բոլոր դասերին գործադրվում են աշխատանքի հետևյալ հիմնական ձևերը՝ զրույց, բնագրի ընթերցում, բառային աշխատանք, նյութի մշակում, բովանդակության վերարտադրում և ամփոփում։ Եթե գրաճանաչության շրջանում զրույցի նյութ էր հանդիսանում թեմատիկ կամ առարկայական նկարը, ապա այս շրջանում զրույցի նյութ է դառնում ուսումնասիրվող բնագրի ընդհանուր թեման։

Միայն կարդալու տեխնիկայի կատարելագործումը, այլև նյութի բազմակողմանի յուրացումը՝ ինչպես բառապաշարի, արտահայտչական միջոցների, այնպես էլ բովանդակության ճանաչողական, գեղագիտական ու դաստիարակչական կողմերի ըմբռնման տեսակետից։

Աշակերտների ընթերցման ժամանակ ուշադրության կենտրոնում պետք է լինի ոչ միայն կարդալու տեխնիկայի կատարելագործումը, այլև նյութի բազմակողմանի յուրացումը։

Դասարանական ընթերցանությունը մայրենի լեզվի տարրական դասընթացի հիմնական բաժիններից մեկն է։

Նրա միջոցով են իրականացվում երեխաների մեջ կարդալու տեխնիկայի զարգացման, գործնական ճանապարհով մայրենի լեզվի

ուսուցման պահանջները:

Հայտնի է, որ ընթերցարաններում տրված նյութերի դասարանական ընթերցումը

կատարվում է տարբեր մեթոդներվ՝ տարրական դասարաններում բացատրական

ընթերցանության մեթոդով:

Մայրենի լեզվի տարրական դասընթացի նպատակն է իրականացնել հետևյալ

Խնդիրներն ու պահանջները, որոնք հիմնականում կապվում են ընթերցանության հետ:

- երեխաների մեջ մշակել ու զարգացնել կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր

հիմնական հատկանիշներով

* գործնական կերպով սովորեցնել մայրենի լեզուն՝ հարստացնել երեխաների

բառապաշարը, մշակել ու զարգացնել երեխաների լեզվական կարողությունները

* աշխարհաճանաչողական տարրական տեղեկություններ տալ շրջապատի

բնական ու հասարակական երևույթների, մարդկանց մասին

* իրականացնել երեխաների բարոյական, գեղագիտական դաստիարակության

ուղղությամբ դպրոցի առջև դրված խնդիրները

Ընթերցանության հիմնական խնդիրներից մեկն էլ երեխաների մտավոր

զարգացումն է, նրանց նոր գիտելիքների ու տեղեկությունների հաղորդումը, որոնք ոչ

միայն պետք է նպաստեն նրանց կրթական մակարդակի բարձրացմանը, այլև

երեխաներին պետք է նախապատրաստեն բարձր դասարաններում ուսումնական

տարբեր առարկաներից համակարգված դասընթացների ուսումնասիրությանն

անցնելուն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

5-6 տարեկան երեխան դպրոց հաճախելիս հայտնվում է մի նոր աշխարհում, որտեղ նա ծանոթանում է իր առաջին ուսուցչին, նոր ընկերներին, դպրոցի շենքին, աշակերտական նստարանին, գրենական պիտույքներին։

5-6 երեխան դպրոց մտնելիս պետք է պատրաստված լինի հարմարվելու դպրոցական

նոր կյանքին։ Նա պետք է գիտակցի՝

* ինչո՞ւ է եկել դպրոց
* ո՞րն է իր առջև դրված խնդիրը
* նա պետք է ենթարկվի դպրոցի կարգուկանոնին
* պետք է ժամանակին և պատրաստ ներկայանա դասերին
* մեծ պատասխանատվությամբ մոտենա ուսումնական բոլոր հարցերին
* դասագիրքը ընկալի որպես իր ընկերոջ
* բարեխղճորեն յուրացնի այբուբենի տառերն ու հնչյունները, որպեսզի ուսման ընթացքում հաջողություններ ունենա
* սովորի և սիրով կատարի օրվա առաջադրանքները

Եթե այս բոլոր աշխատանքները երեխան գիտակցելով և սիրով կատարի, ուրեմն հաջորդ դասարաններում հաջողությամբ կինտեգրվի դպրոցին։

Օգտագործված գրականության ցանկ

Ա. Տեր-Գրիգորյան <<Գրաճանաչության մեթոդիկա>>, 1974

Ա. Տեր-Գրիգորյան <<Հայոց լեզվի մեթոդիկա>> 1980